LegalLab
law boutique

Հասցե՝ Թումանյան փող. 28/20, # 34, Երևան, ՀՀ
Հեռ. +374 12 522 051

ք. Երևան *02.12.2021 թ.*

Սույն իրավական կարծիքը վերաբերում է հասարակական կազմակերպության կանոնադրության դրույթների և համաժողովի կազմակերպման հետ կապված հարցերի մեկնաբանմանը և հիմնված է ՀՀ օրենսդրության, մասնավորապես՝ «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք)[1] որոշակի հոդվածների մեկնաբանությունների վրա:

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Հասարակական կազմակերպությունների հետ կապված կամ դրանց փաստաթղթերում կատարվող որոշակի փոփոխություններ անհրաժեշտ է գրանցել ՀՀ ԱՆ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունում (այսուհետ՝ Գործակալություն): Այդպիսի փոփոխություններ են համարվում, օրինակ կանոնադրության փոփոխություն/ներ/ը կամ նոր խմբագրությամբ կանոնադրության գրանցումը:

Օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետը սահմանում է, որ Կազմակերպությունը պարտավոր է՝ *Կազմակերպության կանոնադրության փոփոխությունների, ինչպես նաև վերակազմակերպման կամ լուծարման դեպքերում՝ օրենքով սահմանված կարգով դիմել Գործակալություն:*

Օրենքի 13-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն. *Կազմակերպության կանոնադրությունը, ինչպես նաև դրանում փոփոխությունները և (կամ) լրացումները կամ նոր խմբագրությամբ կանոնադրությունն ուժի մեջ են մտնում պետական գրանցման պահից*[2]*:*

«Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի համաձայն 6-րդ մասի համաձայն. *Գործակալության կողմից կազմակերպության փաստաթղթերը ուսումնասիրելուց հետո փոփոխությունների պետական գրանցումը մերժելու հիմքեր չհայտնաբերելու դեպքում Գործակալությունում տեղեկատվական համակարգի*

[1] Սույն իրավական կարծիքում ուղղակիորեն մեջբերված, ինչպես նաև մեկնաբանությունների համար օգտագործված իրավական ակտերը կիրառվել և մեկնաբանվել են, դրանց՝ իրավական կարծիքի կազմման պահին գործող խմբագրությամբ:

[2] «Վիքիմեդիա Հայաստան» գիտակրթական հասարակական կազմակերպության կանոնադրության նոր խմբագրությունը գրանցվել և ուժի մեջ է մտել 30.06.2020 թվականին:

միջոցով փոփոխությունների մասին գրառում է կատարվում պետական միասնական գրանցամատյանում:

Նույն հոդվածի 7-րդ մասի 1-ին նախադասության համաձայն. *Փոփոխությունները համարվում են կատարված դրանք գրանցամատյանում գրառելու պահից:*

Հիմք ընդունելով այն հանգամանքը, որ Կազմակերպության կանոնադրությունը գրանցվել է պետական գրանցում կատարող մարմնի՝ Գործակալության կողմից, այն հիմք է տալիս համարելու, որ այդ փոփոխությունները կատարվել են ՀՀ գործող օրենսդրության բոլոր պահանջների պահպանմամբ:

Հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով վերոբերյալ դրույթների միասնական վերլուծությունը պարզ է դառնում, որ «Վիքիմեդիա Հայաստան» գիտակրթական հասարակական կազմակերպության (այսուհետ՝ Կազմակերպություն) նոր խմբագրությամբ կանոնադրության գրանցումից հետո ցանկացած գործողություն, որը կատարվում է Կազմակերպությունում պետք է լինի ՀՀ գործող օրենսդրությանը և գործող, այն է՝ նոր խմբագրությամբ կանոնադրությանը համապատասխան:

ՀԱՄԱԺՈՂՈՎ (ԺՈՂՈՎ)

Համաժողովը համարվում է ցանկացած հասարակական կազմակերպության կառավարման բարձրագույն մարմինը: Այն բաղկացած է հասարակական կազմակերպության բոլոր անդամներից:

Օրենքը սահմանում է, որ. *Համաժողովն իրավազոր է, եթե գումարվել է Օրենքին և Կազմակերպության կանոնադրությանը համապատասխան, և Համաժողովին մասնակցում է Կազմակերպության բոլոր անդամների կամ բոլոր պատվիրակների ընդհանուր թվի կեսից ավելին, եթե Կազմակերպության կանոնադրությամբ մասնակիցների ավելի մեծ քանակ նախատեսված չէ:*

Հասարակական կազմակերպության անդամ է համարվում Կազմակերպության պետական գրանցումից հետո Կազմակերպությանն անդամագրված անձը:

Ի տարբերություն այլ կազմակերպաիրավական ձև ունեցող իրավաբանական անձանց, Օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը սահմանում է, որ հասարակական կազմակերպությունը պարտավոր է վարել իր անդամների հաշվառումը: Օրենքի վերոնշյալ հոդվածն ուղղակի պարտավորություն է դնում Կազմակերպության վրա, որպեսզի նա անընդհատության սկզբունքով վարի իր անդամների հաշվառում և համաժողովի հրավիրման ժամանակ չունենա խնդիրներ:

Հասցե՝ Թումանյան փող. 28/20, # 34, Երևան, ՀՀ
Հեռ. +374 12 522 051

Օրենքի մեկ այլ հոդված՝ 13-րդը սահմանում է, որ Կազմակերպության հիմնադիր փաստաթղթում՝ կանոնադրությունում ամրագրվում են Կազմակերպության անդամին Կազմակերպությունից հեռացնելու դեպքերն ու կարգը, նույնանման դրույթ է սահմանում նաև Օրենքի 5-րդ հոդվածի 6-րդ մասը. *Կազմակերպության անդամը կարող է Կազմակերպության կանոնադրությամբ սահմանված դեպքերում և կարգով հեռացվել Կազմակերպությունից,* ինչն ուղղակիորեն հնարավորություն է տալիս Կազմակերպության կատարել անդամների հաշվառում: Իսկ անդամի իր կամքով հասարակական կազմակերպությունից դուրս գալը համարվում է անդամի իրավունքը և այն նախատեսում է Օրենքը, ամրագրելով, որ դրա մանրամասները պետք է սահմանվեն Կանոնադրությամբ:

Վերոգրյալից հետևում է, որ Կազմակերպությունը պարտավոր է անընդհատ կապի մեջ լինի իր անդամների հետ, վարի նրանց հաշվառումը՝ ինչը կատարվում է անդամության և անդամությունից դուրս գալու դիմումներն ընդունելու և դրանց պատասխաններն ամրագրելու, ինչպես նաև անդամությունից հեռացնելու որոշումներ ընդունելու միջոցով:

Ամփոփելով վերագրյալը փաստում ենք, որ Կազմակերպության կանոնադրությունը, ոչ միայն կազմակերպության հիմանդիր փաստաթուղթն է, այլ նաև՝ այլն հիմնական ուղեցույցը, որը որոշակի դեպքերում առաջնորդում է Կազմակերպության քայլերը, թույլ տալով օրենքով սահմանված շրջանակներում կարգավորելու Կազմակերպության գործունեությունը, դրա հարաբերությունները կառավարման մարմինների և Կազմակերպության անդամների հետ:

Կանոնադրությամբ սահմանված դրույթները թույլ են տալիս վարել անդամների հաշվառում և անցկացնել համաժողով/ներ օրենքով սահմանված իրավասությունների շրջանակներում:

«ԼեգալԼաբ» փակ բաժնետիրական ընկերության ավագ իրավաբան

Մերի Օհանյան _____

«ԼեգալԼաբ»
"LegalLab"
"ЛегалЛаб"
02610651